

2020

**ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՆԱԶ ԹԱՂ»**

ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ**

**ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝  
«ԳԼՈՒԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ**

**ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝  
«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ**

Ա/Ձ Ա. Գալոյան  
ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՆԱԶ ԹԱՂ»  
ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«ԳԼՈՒԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ տնօրեն՝



Լ. Զատիկյան

«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ տնօրեն՝



Ա. Վարդանյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2020

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.3	Հապավումներ	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	6
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	8
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	9
1.5.3	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում</i>	11
1.5.4	<i>Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ</i>	13
1.5.5	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց</i>	15
1.5.6	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ</i>	16
1.5.7	<i>Նյութերի և բնարեսուրսների օգտագործում</i>	17
1.5.8	<i>Արտաքին ցանցեր</i>	18
1.5.9	<i>Էլ. մատակարարում</i>	22
1.5.10	<i>Գազամատակարարում</i>	22
1.5.11	<i>Ջեռուցում</i>	<b>Error! Bookmark not defined.</b>
1.5.12	<i>Օդափոխություն</i>	<b>Error! Bookmark not defined.</b>
1.5.13	<i>Կանաչապատման աշխատանքներ</i>	22
2.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	25
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	25
2.2	Կլիման	25
2.3	Օդային ավազան	31
2.4	Ջրային ռեսուրսներ	34
2.5	Հողերի նկարագիրը	35
2.6	Հողային ռեսուրսներ	35
2.7	Բուսական աշխարհ	36
2.8	Կենդանական աշխարհ	36
2.9	Թափոնների կառավարում	37
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	38
3.1	Ռիսկերի գնահատում	38
3.2	Արտանետումների աղբյուրները	38
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	38
3.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	38
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	39
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	39
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	40
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում</i>	41
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	41
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	42
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	42
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Շիրակի փող. 74/2

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6

1.6 Հեռախոս՝ +37455266666

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ «ԳԼՈՒԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

#### 1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բնակելի համալիր: «Կանաչ թաղ» բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6 հասցեներում:

Բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

Քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագծով նախատեսված է քանդել և ապամոնտաժել Ք. Երևան Ծարավ-Աղբյուր փողոցի 61/1 հասցեում գտնվող /քանդման ենթակա/ շինությունները:

Քանդման ենթակա շինությունների կազմի մեջ մտնում են

001 Պահեստային շինություն-262.2 մ<sup>2</sup>

002 Օժանդակ շինություն-31.36 մ<sup>2</sup>

003 Ավտոտնակ- 85.4մ<sup>2</sup>

Ըստ վերը նշված ցուցանիշների ՔԱԿՆ-ով հաշվարկված է 3 ամսվա քանդման աշխատանքների տևողություն, այդ թվում 0.5 ամիս նախապատրաստական փուլի աշխատանքներ:

Քանդման և ապամոնտաժման նախագիծը կատարված է ըստ ՄՆԻՊ 3.01.01 2008-ի դրույթներով:

Ըստ քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագծի, աշխատանքները կատարվում են 2 փուլով`

- Նախապատրաստական փուլ
- Հիմնական փուլ

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները

- շին հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- ժամանակավոր հարթակների պատրաստում ե/բ կոնստրուկցիաների համար
- շին հրապարակի ժամանակավոր ջրամատակարարում, էլեկտրամատակարարում,
- ժամանակավոր կենցաղային և գրասենյակային շարժական շինությունների տեղադրում /ըստ անհրաժեշտության/
- շենք մտնող բոլոր կոմունիկացիաների անջատում,
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- շին մեքենաների լվացման կետի տեղադրում,
- տեղեկատվական ցուցանակի պատրաստում և տեղադրում

Հիմնական փուլում կատարվում են շինությունների քանդման և ապամոնտաժման աշխատանքները ըստ տեխնոլոգիական հաջորդականության 4 փուլային տարբերակով:

I-ին փուլում կատարվում է օժանդակ շինության և ավտոտնակի քանդման և ապամոնտաժման աշխատանքները, պահեստային շինության անտրեսոլային հարկը և պահեստային շինության արտաքին պատի պանելների ապամոնտաժումը:

11-րդ փուլում ապամոնտաժվում է պահեստային շինության հավաքովի ե/բետոնե ծածկի սալերը:

III-րդ փուլում ապամոնտաժվում է պահեստային շինության հավաքովի ե/բետոնե հեծանները:

IV-րդ ապամոնտաժվում է հավաքովի ե/բետոնե սյուները:

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Քանդման և ապամոնտաժման աշխատանքների համար ընտրված է MKT-16Մքրթուրավոր կռունկ:

Բոլոր տիպի քանդման և ապամոնտաժման պետք է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՄՆԻՊ III-IV-2008-ի դրույթների, մասնավորապես մշակելով լրացուցիչ միջոցառումներ արտացոլելով աշխատանքների կատարման նախագծում ԱԿՆ/

Տվյալ կոնստրուկցիան ապամոնտաժելուց առաջ անհրաժեշտ է նախապատրաստել այն ապամոնտաժման անջատել բոլոր տիպի կապերից: Կոնստրուկցիայից բացակայող բռնիչների համար պետք է մշակել նոր հուսալի բռնիչներ՝ ստուգելով կրկնակի բեռի ծանրության տակ, ինչպես նաև վավերացնելով տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից գրավոր փաստաթղթով: Ապամոնտաժման աշխատանքներում զբաղված անդամները /18տարին լրացած/ պետք է շինարարության ղեկավարի կողմից ստանան հատուկ կարգադր-թույլտվություն տվյալ աշխատանքի կատարման համար և համապատասխան հրանգավորումներ, հանձնելով ստացած գիտելիքների համար քննություն, որը վավերացնում է հատուկակտ-թույլտվությամբ:

Տվյալ տեղամասում, որտեղ կատարվում են ապամոնտաժման աշխատանքները, արգելվում է այլ տեսակի աշխատանքների կատարումը: Ապամոնտաժված կոնստրուկցիայի տեղափոխման պահին էլեմենտի ճոճից և պտտվելուց խուսափելու համար պետք է ուղղորդել հատուկ ճկուն ճոպանների օգնությամբ: Չի թույլատրվում ընդմիջումների պահին բարձրացված էլեմենտը թողնել կախվածկում: Մոնտաժողները /ապա մոնտաժողները/ մեկ էլեմենտից մյուսը անցնելիս պետք է օգտագործեն համապատասխան գույքային աստիճաններ, անցումային կամրջակներ պաշտպանիչ բազրիքներով, որոնք պետք է ամրացված լինեն տվյալ կոնստրուկցիային բարձրացնելուց առաջ քամու արագությունը բաց տեղամասում 15մ/վ և ավելի դեպքում դադարեցնել ապամոնտաժման աշխատանքները:

Ապահովել կռունկավարի և ճոպանասարքերի հետ աշխատողների անմիջական հրահանգային կապը:

Անվտանգության տեխնիկայի վերաբերյալ բոլոր հրանգավորումները վավերացնել վարման սույն աշխատանքում զբաղված մասնագետի ստորագրությամբ:

Աշխատանքների կատարման նախագծում լրացնել բոլոր տիպի ապամոնտաժվող հավաքովի ե/բ կոնստրուկցիաների ցանկը /օգտվելով կազմակերպման նախագծով նախատեսված/ ըստ երկրաչափական և քաշային բնութագրերով:

Քանդման աշխատանքների ժամանակ հաշվի է առնված քանդումից առաջացած պիտանի նյութերի քանակը և առաջարկվում է այն տեղափոխել պահեստային տարածքներ, որի համար կազմվում է համապատասխան ընդունման և հանման ակտկապալառուի և պատվիրատուի միջև:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեռի մթնոլորտ, շին. մեքենաները շին, հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Շին աղբով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:

Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը:

### 1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Կառուցապատման ենթակա հողատարածքի մակերեսը կազմում է 0.5005 հա (0.3505 + 0.15) հա, կադաստրային ծածկագրերը՝ 01-002-0214-0241 և 01-002-0214-0242:

Համաձայն սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N25102019-01-0090 և N2846291 վկայականների՝

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

N25102019-01-0090 հողամասում առկա են սակավահարկ շինություններ, որոնք ենթակա են քանդման:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.5005հա: Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 10 սմ է, տարածված է կիսասանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*),



Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 500մ<sup>3</sup>:

### 1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

#### Բնակելի համալիր

Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուրի փողոց հ.61/1 և հ.61/6 հասցեներում նախատեսվող «Կանաչ թաղ» բնակելի համալիրի նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N25102019-01-0090 և N2846291 վկայականների եվ ճարտարապետահատակագծային առաջադրանքի N01/18-07/1-U-10477-1383 առ. 30.12.2019թ. համաձայն:

Դիտարկվող տարածքը գտնվում է՝ Երևան, Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուրի փողոց հ.61/1 և հ.61/6՝ 0.5005 հա մակերես զբաղեցնող տարածքում: Այն իրենից ներկայացնում է մոտ 56.2մ \* 67.5մ հակագծային չափերով ուղղանկյունաձև տարածք:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկությունները, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Բնակելի համալիրը բաղկացած է երկու մասնաշենքերից, գրոյական նիշը պայմանականորեն ընդունված է առաջին հարկի հատակի նիշով: Բնակելի համալիրը նախատեսված է իրականացնել մեկ կիսանկուղային և երեք վերգետնյա հարկերից, ինչպես նաև մասնաշենքերի կենտրոնական հատվածում նախատեսվում է իրականացնել ստորգետնյա ավտոկայանատեղի:

Տրանսպորտային միջոցների մոտեցումները դեպի տարածք /բնակելի համալիրը/ նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող ճանապարհների միջոցով:

Բնակելի համալիրում նախատեսված է 6 շքամուտքի, յուրաքանչյուրում տեղադրել մեկ վերելակ:

Բնակելի համալիրի կիսանկուղային /նիշ. -3.300/ և առաջին հարկերի /նիշ. 0.000/, ինչպես նաև երրորդ /նիշ. 6.600/ և չորրորդ /նիշ. 9.900/ հարկերի բնակարանները միմիանց հետ կապված են բնակարանների ներքին աստիճանավանդակներով: Եկրորդ հարկում /նիշ. 3.300/ իրականացված է 1-4 սենյականոց բնակարաններ:

Բնակելի համալիրի տանիքը նախատեսված է հարթ, կանաչապատ, շահագործելի ջրահեռացումը՝ ներքին կազմակերպված:

Բնակելի համալիրի որմնախարիսխը նախատեսված է երեսպատել բազալտե սալիկներով, դիմային և կողային ճակատների վերին հատվածը նախատեսված է մշակել բաց երանգի, իսկ որոշ հատվածներում մոխրագույն ցեմենտ-ավազե սվաղով:

Բնակելի համալիրի հարակից տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Բնակելի շենքը կոնստրուկտորական առումով նախատեսված են իրականացնել պանելակարկասային՝ մետաղյա, մոնոլիտ և հավաքովի, ինչպես նաև թեթև շինարարական կոնստրուկցիաների և նյութերի կիրառմամբ:

**Բնակելի համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներ**

1. Հողամասի ընդհանուր մակերեսը -- 5005.0քմ
2. Կառուցապատման մակերեսը -- 2186.2քմ /43.+/%/
3. Բարեկարգման մակերեսը, ներառյալ ճանապարհներ, սավաճքներ և այլ՝ -- 1018.8 քմ
4. Կառուցապատման ընդհանուր մակերեսը /հարկերի մակերեսը ներառյալ/ -- 11491.2քմ
5. Ընդհանուր կանաչապատման մակերեսը, որից՝
  - տարածքի կանաչապատում -- 1800.0քմ
  - տանիքի կանաչապատման մակերեսը -- 1160.0քմ
  - կողային ճակատների կանաչապատման մակերեսը -- 680.0քմ

**Բնակելի համալիրի իրականացման հիմնական բնորոշիչներ**

- 3 հարկանի, 2 մասնաշենքից բախկացած սեյսմիկ կարերով առանձնացող 4 սեկցիա միախմբված մեկ Համալիրում
- առավելագույն բարձրությունը՝ 13.5 մ:
- կոնստրուկտիվ համակարգը պանելակարկասային:
- ջրահեռացումը՝ ներքին կազմակերպված:
- մասնաշենքերի կենտրոնական հատվածում ստորգետնյա ավտոկայանատեղի:

Նախագծման ընթացքում հաշվի է առնված հաշմանդամների եվ սակավաշարժ խմբերի անխոչընդոտ շարժի կազմակերպման միջոցները, ուստի շինությունների մուտքային հանգույցներում առկա են թեքահարթակներ, իսկ շինության ներսում վերելակներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

**1.5.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում**

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել տարածքով անցնող խմելու ջրի խողովակների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

1©Աշխատանքների բնույթից ելնելով<sup>a</sup> բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում«


օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության<sup>ա</sup> անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.5.4 Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ





Գլխավոր հատակագիծ



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500

	ՆՊՃ	ԱՊՐՈՒԻԶԱՆՅԱՆ		<b>ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱՆՈՐԻ ՆԱԽԱԳԻԾ</b> <small>ՊՆՍՎՈՐԱՏՈՒ «ԿԱՆԱԴ ԹՄՐ» ՍՊԸ</small>			
	ՃԱՐՏԱՐԱԿՐԵՑ	ՇՆԱԲԱՐՈՅՄԱՆ		ՀԱՅՑԻ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ ԿԱՐԻ, ԵՐԶՆԵՆ, ՇԱՏՈՒԿ ԱՐԵՏՈՒՐԻ Փ. Խ.81/1 և Խ.81/8	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
				ՃԱՐՏ. ԵՆ. ՄԱՍ	Ա.Ն.	3	11
		«ՂՈՐԱՍ ԳՐՈՒԵԿՏ» ՍՊԸ ՏՆՈՐԵՆՆԵՐ ԿԱՏՏԻԿՅԱՆ		<b>ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500</b>	ԼԻՑԵՆԶԻԱ Հ.16634		

1.5.5 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ ՄՆԻՊ 1.04.03.2008-ի նորմերով, կազմում է 450օր:

**ԾԱՐԱԿ ԱՂԲՅՈՒՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՐՈՎ 15 ԱՄԻՍ**

Ժամանակահատված	15օր																													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
1 Հողային աշխատանքներ	■	■	■	■																										
2 Հիմնային աշխատանքներ			■	■	■																									
3 Ավտոկայանատեղի և նկուղային հարկ						■	■	■	■	■	■																			
4 Միանույլ երկարկատային աշխատանքներ												■	■	■	■	■														
5 Արտաքին պատերի մոնտաժում և տորկերի ազդում																■	■	■	■	■										
6 Տանիքային աշխատանքներ																										■				
7 Դռների և պատուհանների տեղադրում																										■	■	■		
8 Արտաքին ճակատների հարդարում																											■	■	■	
9 Ներքին հարդարման աշխատանքներ																												■	■	■
10 Տարածքի բարեկարգման աշխատանքներ																														■

**1.5.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ**

Կառուցապատման ենթակա հողատարածքը գտնվում է Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուրի փողոց հ.61/1 և հ.61/6 հասցեներում

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.5005հա:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 36 մարդ, որից

- Բանվորներ -30 մարդ
- Ինժեներներ -6 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

N Ը/Կ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չ/Մ	ՔԱՆԱԿ
1	ԱԿՏՈՒԼԵՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱ 'ԿԱՄԱՉ'	ՀԱՏ	4
2	'ՔԵՏ-ԲԱՔ' ԷՔՍԿԱԿԱՏՈՐ 'CAT' ՖԻՐՄԱՅԻ	ՀԱՏ	1
3	ԲՈՒԼԴՈՉԵՐ-ԱՄԲԱՐՁԻՉ 'CAT' ՖԻՐՄԱՅԻ	ՀԱՏ	1
4	ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՈՒՆԿ ՕՏԶ-80 ՄԱԿԼԻՇԻ	ՀԱՏ	1
5	ԲԵՏՈՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ (ՊՏՏՎ ԹԱՓՔՈՎ)	ՀԱՏ	3
6	ԲԵՏՈՆԱՆՏԱՅՆՈՂ ՍԱՐՔ /ԽՈՐԲԱՅԻՆ/	ՀԱՏ	3
7	ԲԵՏՈՆԱՆՏԱՅՆՈՂ ՍԱՐՔ /ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԱՅԻՆ/	ՀԱՏ	3
8	ԵՌԱԿՑՄԱՆ ԱԳՐԵԳԱՏ CTH-550	ՀԱՏ	2
9	ՊԼԵՎՍՈՆԱՆԻՎԱՅԻՆ ՍԱՐՔ	ՀԱՏ	3

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

**Հողային աշխատանքներ՝**

Հանույթ՝ 13000մ<sup>3</sup>

Հետլիցք՝ 920մ<sup>3</sup>

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:



**1.5.7 Նյութերի և բնարեսուրսների օգտագործում**

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես՝

- բետոն - 21050 մ<sup>3</sup>
- ամրան - 3000 տոննա
- ալյումինե կոմպոզիտային նյութեր - 200 մ<sup>2</sup>
- ապակի - 2000 մ<sup>2</sup>
- տրավերտինե երեսպատում - 3057 մ<sup>2</sup>
- բարձրորակ ներկ - 1000 մ<sup>2</sup>

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում. Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից :

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

**N**– ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 30 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 810 օր

$$W_{\Sigma. \text{տ.}} = (6 \times 0.016 + 30 \times 0.025) \times 450 = 380.7 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.85 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 500 \times 0.0015 \times 450 = 337.5 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 718.2 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական անձնագրի: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Շինանձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով շինհրապարում կտեղադրվեն ժամանակավոր բիոգուգարաններ, որոնք կապամոնտաժվեն շինաշխատանքերի ավարտից հետո :

**1.5.8 Արտաքին ցանցեր**

**Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր**

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Համաձայն նորմատիվային տվյալների, ք. Երևան, Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուրի փող. 61/1 հասցեում նախագծվող բազմաբնակարան գույգ շենքերի բնակիչների քանակը կազմում է 250 մարդ, բնակարանների և կիսանկուղային հարկում նաժատեսվող տարածքների ընդհանուր քանակը՝ 63:

Շինության տիպը՝ բնակելի/հասարակական նշանակության:

Ցանցի հաշվային հատվածի առավելագույն վայրկյանային ելքը  $q_{max}$  լ/վ, պետք է որոշել հետևյալ բանաձևով.

$$q_{max} = 5 \cdot q_0 \cdot \alpha \text{ լ/վ}$$

որտեղ՝  $q_0$  - ջրի վայրկյանային ելքն է, որի մեծությունը պետք է որոշել համաձայն

СНиП 2.04.01-85-ի:  $q_0 = 0.30 \text{ լ/վ}$

$\alpha$  - գործակիցը, որը որոշվում է համաձայն սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածի:

$$NP = \frac{q_{sum} \cdot U}{q_0 \cdot 3600} = \frac{13 \cdot 250}{0.30 \cdot 3600} = 3.01$$

Շինարարական նորմերի 4-րդ հավելվածի 1-ին աղյուսակով անհրաժեշտ է դեկավարվել, երբ  $P \leq 0,1$  և  $N \geq 200$ , P-ի և N-ի այլ արժեքների դեպքում  $\alpha$  գործակիցը պետք է ընդունել համաձայն սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածի 2-րդ աղյուսակի՝  $\alpha=1,84$ :

Ստացվում է՝  $q_{max} = 5 \cdot q_0 \cdot \alpha = 5 \cdot 0.3 \cdot 1,84 = 2,76 \text{ լ/վ}$

Արդյունքում ջրամատակարարման համար անհրաժեշտ է 2,76լ/վ:

Ամփոփելով վերոնշյալ հաշվարկը, ստացված 2,76լ/վ-ի դեպքում, ըստ Շեվելյովի աղյուսակի, ջրագծում արագությունը կկազմի մոտ 0,6մ/վ, իսկ ճնշման կորուստը կկազմի 2,04մ:

Նախագծով ընտրել ենք de90 մմ տրամագիծ, ելնելով СНиП 2.04.03-85 կանոններով:

Ջրաչափին ընտրել DN80մմ տրամագծի:

**Հիմնական նախագծային լուծումներ**

**Ջրամատակարարում**

Խմելու կենցաղային խողովակաշարը նախատեսվում է շենքերի կենցաղային կարիքների համար և ապահովում է ջրի մատակարարում դեպի սանիտարական սարքավորումներ: Համաձայն տեխնիկական առաջադրանքի վերոնշյալ գույգ բազմանբակարան շենքերի համար ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում շենքերի տարածքից մոտ 300մ հեռավորությամբ գտնվող 600մմ տրամագծի պողպատե ջրազիծը: Հաշվի առնելով միացման կետի հեռավորությունը շենքերից՝ միացման կետում նախատեսվել է փականային հոր, իսկ ջրաչափական-փականային հորը նախատեսվել է շենքերից մոտ 3մ հեռավորությամբ հատվածում՝ 80մմ տրամագծի ջրաչափի տեղադրմամբ: Գրունտի առեցման խորությունը (Երևան քաղաքի Ավան թաղամասի համար 0,7մ է) և պոլիէթիլենե խողովակների վրա դինամիկ ուժերի պայմանը հաշվի առնելով, դեպի շենքեր ջրի մատակարարման 90մմ տրամագծի պոլիէթիլենե խողովակը նախատեսվում է իրականացնել 1,3մ խորությամբ խրամուղով:

Տեխնիկական առաջադրանքի համաձայն միացման կետում առկա է 4,0մթն. ճնշում, հաշվի առնելով այդ հանգամանքը, նչպես նաև միացման կետի և շենքերի տեղադիրքը՝ ապահովվում է շենքերի համար պահանջվող ճնշումը(իրականացված հիդրալիկական հաշվարկի արդյունքները տես բացատրագին կից): Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսվել է պոլիէթիլենե խողովակներից, իսկ ներքին համակարգը պոլիպրոպիլենե խողովակակներից:

Ջրամատակարարման ներքին համակարգի համար նախատեսվում է խողովակների մոնտաժման թաքնված տարբերակ հատակում կամ դեկորատիվ կորոբով ծածկելով և ջերմամեկուսացնելով 3սմ հաստությամբ ջերմամեկուսիչով: Կոնստրուկցիաների հետ հատման հատվածներում անհրաժեշտ է նախատեսել պատյան խողովակ: Նախագծով նախատեսվել է ջրամատակարարման համակարգի փակուղային սխեմա, ջրբաթման խողովակները և դեպի սարքավորումներ խողովակները նախատեսվում է իրականացնել 0,002 թեքությամբ անհրաժեշտության դեպքում համակարգը դատարկելու նպատակով: Ջրամատակարարման ցանցի բաշխումը նախատեսվում է իրականացնել կամ կոմունիկացիաների համար նախատեսված հատուկ միջանցքներում կամ ավտոկայանատեղում:

Բնակիչ բաժանորդների ջրաչափական հանգույցները նախատեսվել են շքամուտքերում նախքան բնակարան մտնելը: Նախագծի շրջանակներում նախատեսվել է յուրաքանչյուր շենքի համար երեք կանգնակի իրականացում յուրաքանչյուրը 32մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներից: Յուրաքանչյուր հարկի շքամուտքում նախատեսվել են բաժանարարներ(граница) 3 կամ 2 միացման համար և ջերմամեկուսացմամբ մետաղական արկղեր որոնցում կտեղադրվեն ջրաչափական հանգույցները:

Սույն նախագծի շրջանակներում տաք ջրամատակարարման համակարգ չի նախատեսվում, քանի որ տրվելու են լոկալ լուծումներ:

Այն հարկերում, որտեղ ջրի ճնշումը գերազանցում է 40մ-ը, բաժանարարի հանգույցում նախատեսվել են ճնշման կարգավորիչներ:

### Կենցաղային կոյուղի

Նախագծով նախատեսված բնակարանների կոյուղու ինքնահոս հեռացում դեպի գործող կենտրոնացված կոյուղու համակարգ: Կոյուղու ներքին համակարգի խողովակները անհրաժեշտ է մոնտաժել հատակից բարձր 0.25մ, հաշվի առնելով նվազագույն թեքությունները 0.03 – 50մմ տրամագծի և 0.02-110մմ տրամագծի խողովակների համար՝ ապահովելով թույլատրելի  $V=0,7$ մ/վ արագությունը և լցվածությունը: Նախատեսվում է խողովակների թաքնված տիպի մոնտաժում՝ հորաններով, հատակում, ծածկելով դեկորատիվ կորոբով: Հեռացնող խողովակները կանգնակին միացնելու համար անհրաժեշտ է նախատեսել թեք եռաբաշխիչներ: Կոյուղու կանգնակները վերնի հատվածում կատարում են ծխնելույզի ֆունկցիա, խողովակը տանիքից մակերևույթից բարձրանում է 0.3մ-ով (ուղիղ տանիքներ), 0.5մ-ով (թեք տանիքներ): Կոյուղու ներքին համակարգը նախատեսվում է իրականացնել PVC լայնուկավոր խողովակներից: Կոյուղու թողարկ խողովակների համար նախատեսվող հորերի հեռավորությունը շենքերից նվազագույնը 3.0մ է:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի վերոնշյալ գույք բազմանբակարան շենքերից հեռացվող կենցաղային կոյուղին անհրաժեշտ է հեռացնել մոտ 950,0մ հեռավորությամբ, դեպի Աճարյան փողոցով անցնող 800մմ տրամագծի կոյուղու կոլեկտոր՝ միացման կետում նախատեսելով նոր դիտահոր: Նշենք, որ նախագծվող կենցաղային կոյուղու կոլեկտորին գույքահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոլեկտորի կառուցում (հեղեղատար համակարգի նկարագրությունը տես ստորև): Նախագծվող կենցաղային կոյուղու կոլեկտորն ու նախագծվող հեղեղատարը նախատեսվում է իրականացնել նույն խրամուղով՝ պահպանելով թույլատրելի հեռավորությունը խողովակների միջև և հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու կոլեկտորների ուղեգծերով, նորմատիվային հեռավորությունները պահպանելով տեղադրվելու են ե/բ դիտահորեր:

Կենցաղային կոյուղու և հեղեղատար արտաքին ինքնահոս համակարգում նախատեսվում են պոլիէթիլենե ակոսավոր ոչ ճնշումային 200մմ տրամագծի SN8 տիպի խողովակների մոնտաժում:

Սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը, նախագծվող կոյուղու և հեղեղատար խողովակները տեխնիկական առաջադրանքով տրված գործող կոլեկտորներին միացման համար նախագծվող կոյուղու կոլեկտորի ՆԿ 7+38-ում անհրաժեշտ է պոմպակայանի կառուցում, նույն կետում պոմպակայանի կառուցում է անհրաժեշտ նաև հեղեղատար կոլեկտորի համար:

Նախատեսվող պոմպակայանները ստորգետնյա ե/բ հորեր են, որոնցում տեղադրվելու են կոյուղու խորասուզված պոմպեր: Պոմպակայանների մղման խողովակները թե կենցաղային և

թե հեղեղատար համակարգերի համար նախատեսվել են պոլիէթիլենե ճնշումային խողովակներից:

**Հեղեղատար համակարգ**

Նախագծի շրջանակներում նախատեսվում է տանիքներից կազմակերպված ձևով անձրևաջրերի հեռացում ներքին համակարգով, ինչպես նաև կազմակերպված ջրահեռացում կանաչ գոտիներից, շրջակա ճանապարհներից: Նախագծի շրջանակներում նախատեսվում է նաև ավտոկայանատեղիի մակերևույթային ջրերի հեռացման համակարգի իրականացում, որը նույնպես միացվելու է հեղեղատար համակարգին: Նախագծվող հեղեղատար կոլեկտորի նկարագրությունը տրված է կենցաղային կոյուղու նկարագրության հատվածում: Համաձայն տեխնիկական առաջադրանքի շենքերի հեղեղատար համակարգի կոլեկտորը նույնպես անհրաժեշտ է հեռացնել մոտ 950,0մ հեռավորությամբ, դեպի Աճարյան փողոցով անցնող 1000մ տրամագծի հեղեղատար կոլեկտոր՝ միացման կետում նախատեսելով նոր դիտահոր:

Հարկերի թիվը	4
Հարկի բարձրությունը (հատակից հատակ)	3,3մ
Կիսանկողի բարձրությունը Ավտոկայանատեղի բարձրությունը	3,75մ 3,95մ
Պահանջվող ճնշումը H <sub>պահ</sub>	30մ
Տաք ջրամատակարարում	Լոկալ լուծումներ
Շենքի ջրամատակարարման տեսակը	Ինքնահոս
Հեռավորությունը շենքերից մինչև ջրամիացման կետ	300,0մ
Հեռավորությունը շենքերից մինչև քաղաքի փողոցային կոյուղու կոլեկտոր	950,0մ
Հեռավորությունը շենքերից մինչև քաղաքի փողոցային հեղեղատար կոլեկտոր	950,0մ
Քաղաքային ջրագծի տրամագիծը	600 մմ
Քաղաքային կոյուղու կոլեկտորի տրամագիծը	800 մմ
Քաղաքային հեղեղատար կոլեկտորի տրամագիծը	1000 մմ
Բացարձակ բարձրության նիշերը շենքերի մոտ	1271,1-1268,25մ

Առաջին հարկի հատակի բացարձակ բարձրության նիշը	1272,0մ
Քաղաքային կոյուղու կոլեկտորի դիտահորի առվակի բացարձակ բարձրության նիշը	1244,11մ
Քաղաքային հեղեղատար կոլեկտորի դիտահորի առվակի բացարձակ բարձրության նիշը	1244,98մ

**1.5.9 *Էլ. մատակարարում***

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

**1.5.10 *Գազամատակարարում***

Բնակելի համալիրի գազամատակարարումը իրականացվելու է համաձայն «Գազարոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

**1.5.11 *Կանաչապատման աշխատանքներ***


Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից նախապատրաստվել է «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:









Էլեմենտների ընտրությունը կատարված է հաշվի առնելով համալիրի նախագծի առանձնահատկությունները և տարածքի ուսումնասիրությունը:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամսողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:





ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՐ ԵՎ ԾՈՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱ

	ԾՈՌԱՏԵՍԱԿՆԵՐ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ հատ	ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱ
1		Չիակասկ	10	
2		Դեկորատիվ սալոր	27	
3		Սկունյիա	9	
4		Թոյա	69	
5		Սամշիտ- բնկան պատնեշ	1 գ.մ. * 4 հատ 42.6*4-170 հատ	
6		Ծաղկասածի	1 թ.մ. * 30 հատ 1800*30-45000 հատ	



**2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ**

Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Ավան վարչական շրջան, Ծ. Աղբյուրի հ.61/1 և հ.61/6 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Կառուցապատման ենթակա հողատարածքի մակերեսը կազմում է 0.5005 հա (0.3505 + 0.15) հա, կադաստրային ծածկագրերը՝ 01-002-0214-0241 և 01-002-0214-0242:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.5005հա: Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 30 սմ է, տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 500մ<sup>3</sup>:

**2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Հետագոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում, իրենից ներկայցնում է բաց տարածք, թույլ թեքությամբ:

Տարածքում տարածված են հրաբխային ապարներ, ծածկված պոլյուվիալ, էյուվիալ, դեյուվիալ նստվածքներով:

Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրերը բացակայում են:

**2.2 Կլիման**

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան  $-30^{\circ}\text{C}$ , բացարձակ մաքսիմումը հասնում է  $+42^{\circ}\text{C}$ : Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

**Օդի միջին ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$**

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	-0.1	<b>11.5</b>

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

**Օդի հարաբերական խոնավությունը, %**

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	<b>61</b>

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Արաբկիր կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ<sup>2</sup>: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

**Տեղումների բնութագիրը**

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>28</u>	<u>31</u>	<u>38</u>	<u>48</u>	<u>55</u>	<u>16</u>	<u>8</u>	<u>11</u>	<u>31</u>	<u>30</u>	<u>28</u>	<u>22</u>	<b>353</b>
22	28	26	34	47	34	22	47	34	30	26	28	<b>47</b>

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ<sup>2</sup>:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-”Էրեբունի” մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

**Քամու բնութագիրը**

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱր լ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	<u>3</u> 2.0	<u>10</u> 2.1	<u>13</u> 2.2	<u>16</u> 2.8	<u>20</u> 2.6	<u>26</u> 2.3	<u>9</u> 2.7	<u>3</u> 3.4	78
IV	<u>7</u> 3.1	<u>14</u> 2.9	<u>8</u> 2.4	<u>18</u> 3.5	<u>18</u> 3.0	<u>16</u> 3.0	<u>13</u> 4.1	<u>6</u> 3.4	50
VII	<u>17</u> 5.5	<u>31</u> 5.9	<u>3</u> 2.2	<u>9</u> 2.4	<u>16</u> 2.1	<u>13</u> 2.5	<u>7</u> 2.7	<u>4</u> 4.6	40
X	<u>5</u> 2.7	<u>18</u> 2.3	<u>10</u> 1.8	<u>11</u> 2.5	<u>19</u> 2.2	<u>22</u> 2.2	<u>10</u> 2.8	<u>5</u> 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

**Արեգակնային ճառագայթում (Երևան)**

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՁ/մ <sup>2</sup>												միջին տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	106 8	104 7	842	620	339	214	<b>700</b>

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	<b>2696</b>

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	<b>39</b>

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա				ամենա ցուրտ հինգօրյակի				Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝							
ապահովվածություն				միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամառային	0			8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
0.98	0.92	0.98	0.92												
-17	-16	-16	-15	-3.1	-21	6.4	67 -1.9	140 1.1	159 1.9	77	69	155	-	ՀսԱրլ	1.9

Կլիմայական պարամետրերը տարվա տար ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.




Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		Միջին ամսական արտադրվածությունը	ամենատաք ամսվա միջին արտադրվածությունը	ամենատաք ամսվա միջին օրական ամառային	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններ ից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
0.95	0.99									
33	33	41	31.8	13.3	49	35	198	47	ՀվԱրմ	1.7

### 2.3 Օդային ավազան



Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

**Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.**






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները








Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

**2.4 Ջրային ռեսուրսներ**

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2018 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ<sub>5</sub>-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

**2.5 Հողերի նկարագիրը**

*Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

**2.6 Հողային ռեսուրսներ**

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 13000 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 920 մ<sup>3</sup> հետլիցք: Ավելցուկային 12080մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

**2.7 Բուսական աշխարհ**

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարրերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

**2.8 Կենդանական աշխարհ**

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոջը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Ավան վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

## 2.9 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Մակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 600-700 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 900տ շինարարական աղբը (քանդման փուլ + շինարարության փուլ): Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**3.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**3.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**3.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

### 3.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

### 3.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.  
  - գ Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

**3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը**

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:



**3.3.5 Աղմուկ և թրթռում**

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

**3.3.6 Թափոնների կառավարում**

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

➤ Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**3.3.7 Տարածքի բարեկարգում կանաչապատում**

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**4. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ**

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 800 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		<p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանա չապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում</li> </ul> <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>-ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>

<p>Թափոնների կառավարում</p>	<p>▪</p> <p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</li> <li>- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</li> <li>- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</li> <li>- Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</li> <li>- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել</li> <li>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը</li> </ul> <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</li> </ul>
-----------------------------	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարան պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Բներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Բներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում  Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ  վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս  Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում  Արտաքին գնում	Շինարարության Ավարտին  Շինարարության ընթացքում	Կապալառու,  Կապալառու,



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արևանէտումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ Ք

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱԴՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)  
N 01/18-07/1-Ս-10477-1383 « 30 » « 12 » 2019թ.

Table with 2 columns: Field Name and Value. Fields include: Օբյեկտ (Object), Գտնվելու վայրը (Location), Կառուցապատող (Builder), Լուսադրանքի տրամադրման հիմքը (Basis for lighting plan), 1. Հողամասը գտնվում է (Plot location), 2. (\*) Հողամասի չափերը (Plot dimensions), 3. Հողամասի առկա վիճակը (Plot status), 4. (\*) Տրանսպորտային պայմանները (Transport conditions), 5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (Engineering networks), 6. (\*) Կից հողամասեր (Adjacent plots), 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմաշակութային հուշարձանների տարածքներ (Special nature and/or historical/cultural monuments), 8. (\*) Հատակագծային սահմանափակումներ (Boundary conditions).

Ն Ա Մ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

Մշակել երկու մասնաշենքերից բաղկացած բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծ հ. 25102019-01-0090 և 13.09.2011թ. հ.2846291 վկայականներով ամրագրված հողամասերի սահմաններում:

- 9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----
- 9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) Հարակից հողամասերից, շենքերից և շինություններից կառույցի հեռավորությունը նախադրելի գործող նորմատիվային պահանջների համաձայն:
- 9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) Մասնաշենքերը նախադրելի մինչև երեք վերգետյա հարկերով, Հնարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շեշտադրում: Տիպարային հարկի բարձրությունը հարկից հարկ ընդունել 3.30 մ, առավելագույն բարձրությունը համահարթեցման նիշից ընդունել մինչև 14.00 մ:

- 9.4. կառուցապատման խտության գործակիցը -----
- 9.5. կառուցապատման տոկոսը ----- Ծնքի փակ մինչև 40%
- 9.6. կանաչապատման տոկոսը ----- Ծնքը սպասարկող ճանապարհների ու սալվածքների համար մինչև 20%
- 9.7. այլ պահանջներ ----- 40% և ավելի

- Սույն թույլտվության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պեղական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից փրարածքների շահագործման այդ թվում արևահարման ռեժիմի ազդեցության և նորմափոփային պահանջները:
- Հարակից գծային լուծումները մշակել համաձայն պարզաբանության առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմափոփային պահանջները:
- Կառուցվելու կենտրոնացված օդափոխության համակարգ շահագործելու դեպքում, կառույցի արտաքին փակված և ճարտարապետական հորինվածքը հեղափոխելու համար, նախադրելի թողարկված համակարգ՝ փրարածքի օդափոխիչների փոխարինման համար:
- Կառուցվող նախադրելի հասարակական նշանակության փրարածքների սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հեղափոխում արտաքին ճակատների օդափոխիչների անցկացումը:
- Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելուժուրի և բացօթյա ավտոկայանման խնդիրները:
- Տանիքները նախադրելի կազմակերպված ջրահեռացմամբ:
- Գիշավոր հարակից շենքերը մշակելիս հաշվի առնել երկրորդական սպասարկման ճանապարհի կազմակերպման հեռանկարային ներառվողությունը:
- Նախագծի կազմում ներառել փրարածքի ուղղաձիգ հարակից գծման, բարեկարգման և կանաչապատման մասերը:
- Տանիքները նախադրելի հարթ, կիրառելով հորիզոնական կանաչապատման սկզբունքը:



10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	Քանդման ենթակա են՝ ավրորնակ (85.4 քմ), պահեստ (262.2 քմ) և օժանդակ շինություններ (31.36 քմ):
11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Մասնաշենքերի կենտրոնական հատվածում նախատեսված ստորգետնյա ավրորնակառուցում:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից փրված փեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	----- (համաձայն N1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. աղբահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ռիելթի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Մշակել տարածքի բարեկարգման, կանաչապարսպի և ուղղաձիգ հատակագծման նախագիծ, հնարավոր է նախատեսել ճարտարապետական փորձը ձևեր: <small>(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձը ձևեր, ցանկապատում, գրվազը և այլն)</small>
15. Շինարարական նյութեր	<ul style="list-style-type: none"> <li>Երկաթբետոն, սրբաքար և կոպրաքար քար, փայտ, մեղաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապարսպի բարձրորակ նյութեր:</li> </ul>
16. Պաշտպանական կառույցներ	----- <small>(չինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)</small>
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները: <small>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)</small>
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀԸՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	<ul style="list-style-type: none"> <li>Նախատեսել շրջակա միջավայրը վնասված վիճակից բացառելու համապատասխան միջոցառումներ:</li> <li>Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թթվոտմանին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և արհեստական ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները: <small>(շրջակա միջավայրը վնասված վիճակից բացառելու միջոցառումները)</small></li> </ul>
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: <small>111. Նուր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը ստանալու է 2 տարի ժամկետով, եթե սույն օրենքի շինարարության համար քաղաքաշինության քննադատի պետական լիազորված մարմին ՍԼԿՊ 1.04.03.85* (Չեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տնօրենության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Չուղղություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ բաղնիքի, վերակառուցման, փոխառնակման և բաղնիքի) աշխատանքների համար թույլտվությունը ստանալու է նախագծային փաստաթղթերով սույն օրենքի շինարարության (բաղնիքի և շինությունների) տնօրենության նորմերով հաշվարկված ժամկետով: <small>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)</small></small>
21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու տարի, հնարավոր է մասնաշենքերի առանձնաված փուլային համաձայնեցում: <small>(ընդամենը են առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)</small>
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն, այդ թվում՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ: <small>(ընդամենը են առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)</small>
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ քաղաքաշինության, փեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: <small>(իրավասու մարմին կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չափազանց մարմինների հետ էլեկտրային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջարկների փոփոխման հնարավորությունը՝ N1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ):</small>
24. Հասարակական քննարկումներ	----- <small>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)</small>
25. Համաձայնեցումներ	<ul style="list-style-type: none"> <li>Երևանի քաղաքապետի հետ:</li> <li>Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փյույկ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:</li> </ul>
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	Բնակարանների սպասարկման համար առաջին հարկում նախատեսված բաժանորդային փոստարկղերի տեղադրման համար համապատասխան տարածքներ:
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հյուսարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրոյթներին:

ստորագրությունը  
Կ. Տ.



Երևանի քաղաքապետ՝  
Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ  
Կարգավոր՝ Է.Օրդուխանյան





**Տեխնիկական պայման ԱՄ 1632 /2020/**  
(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման, նախագծման)

Երևան, Ավան Ծարավ Աղբյուրի փողոց 61/1

«Կանաչ Թաղ» ՍՊԸ

095666765

/Տարածքի կապակ/

/Դժվարությունների անուն, ազգանուն/

/Հեռախոսահամար/



Միացման տեսակ Նկարագիր	Ջրագիծ	Կոյուղագիծ	Հեղեղատար	Հիդրանտի տեղադրման
Գտնվելու վայր	<i>Տարածքից մոտ 265մ հեռավորությամբ անցնող</i>	<i>Աճարյան փողոցով անցնող</i>	<i>Աճարյան փողոցով անցնող</i>	
Տրամագիծ, ճնշում, տեսակ	D=600մմ, P=4.0մթն.պող.	D=800մմ	D=1000մմ	
Միացման կետ	<i>Տարածքից մոտ 265մ հեռավորությամբ</i>	<i>Աճարյան փողոց</i>	<i>Աճարյան փողոց</i>	
Միացման տրամագիծ	<b>Համաձայն նախագծի</b>			
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը				
Այլ պահանջներ	<i>Ջրաչափական հանգույցի համար կառուցել ղիտահոր</i>	<i>Կոյուղագծի միացման կետում կառուցել ղիտահոր</i>	<i>Հեղեղատարի միացման կետում կառուցել ղիտահոր</i>	<i>Հիդրանտի միացման կետում կառուցել ղիտահոր</i>
Ջրամատակարարման գրաֆիկ	<i>07.00-24.00</i>			


Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը և այն համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը ղիմողի հայեցողությամբ իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ վերջինիս պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ ղիմող անձի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ ղիմող անձի հաշվին :


Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի ժամկետով գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի գործողության ավարտը՝ ղիմողի կողմից ներկայացրած ղիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում հողային աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները /համաձայնությունները:


«Արևմուտք» ՏՏ տնօրենի տեղակալ՝

 Ա. Եղիկյան

«Քանաքեռ-Զեյթուն» տեղամասի պետ

 Ա. Կուրդինյան

Տեխ.պայմանների համակարգող

 Գ. Վարդանյան

կատարող









Закрытое акционерное общество  
«Газпром Армения»  
(ЗАО «Газпром Армения»)

**ЗАМЕСТИТЕЛЬ  
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА  
ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР**

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091  
тел.: (374 10) 294-888, 294-753, факс: (374 10) 294-728  
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»  
փակ բաժնետիրական ընկերություն  
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ  
ՏԵՂԱԿԱԼ  
ԳԼԽԱՎՈՐ ԵԱՐՏԱՐԱԳԵՏ**

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43  
հեռ.՝ (374 10) 294-888, 294-753, ֆաքս՝ (374 10) 294-728  
էլ. փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«15» 04 2020 թ. ր.

№ 02-23/1595

«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ տնօրեն  
տիկին Ա. Վարդանյանին

պատճենը՝ Երևանի ԳԳՄ տնօրեն  
պարոն Գ. Մովսիսյանին

Գազաֆիկացման վերաբերյալ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն թույլատրում է պատվիրատուի միջոցներով, պայմանագրային կարգով՝ Երևանի ԳԳՄ 15.04.2020թ. №22-13/1211 գրությամբ առաջադրված տեխնիկական պայմաններին համապատասխան, արտոնագիր ունեցող կազմակերպությունների միջոցով, կազմել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուր փողոցի թիվ 61/1 հասցեում «ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և իրականացնել շինհավաքակցման աշխատանքները՝ մասնաճյուղի կողմից համաձայնեցված և վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:

Գազամատակարարումն իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի N95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով, սպահովելով «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջները:


Առդիր՝ գազաֆիկացման տեխնիկական պայմանները և եզրակացությունը – 2 էջից:

Ա. Հակոբյան

Կատ. Ա. Խաչատրյան  
հեռ. 29-47-96



Հաստատում եմ՝  
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
Գլխավոր տնօրենի տեղակալ-  
Գլխավոր ճարտարագետ

 Ա. Հակոբյան

«15» 04 2020թ.

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուր փողոցի թիվ 61/1  
հասցեում «ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքերի  
(օբյեկտի անվանումը և հասցեն)  
գազամատակարարումը 150 մ<sup>3</sup>/ժ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել  
տարածքում առկա ԳԲ ցանցի մ/ճ գազատարից  
(գոյություն ունեցող գազատարի անվանումը)


որի պայմաններն են՝

- Միացվող գազատարում գազի ճնշումը 1.0-1.5 կգ/սմ<sup>2</sup>
- Գազատարի տրամագիծը 729մմ
- Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն -
- Միացման կետը Ըստ տեխնիկական պայմանների:
- Լրացուցիչ պայմաններ Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում:

Հիմք՝

- Երևանի ԳԳՄ 15.04.2020թ. No 22-13/1211 գրությունը,
- Տեխնիկական պայմանները:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ



Յու. Նազարյան

Կազմեց



Ա. Խաչատրյան



### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ք. Երևան Ավան վարչական շրջանի, Ծարավ Աղբուր փողոցի թիվ 61/1 հասցեում «ԿԱՆԱԶ ԹԱԴ» ՍՊԸ կողմից կատարվող բազմաբնակարան շենքերի գազամատակարարման.

1. Գազի 150 մ³/ժ ծախսով հնարավոր է իրականացնել՝ տարածքի միջին ճնշման d=729 մմ տրամագծի գազատարից՝ նախագծային լուծմամբ.


2. Միագվող գազատարում գազի ճնշումը՝ P = (1.0 – 1.5) կգ/սմ²

3. Միացման կետեր «Ա» կետում  
(նշել միացման տեղի հասցեն, տեղակայումը և պիկետը)

4. Լրացուցիչ պահանջներ :

5. ԳՃԿ-ի տեղադրումը՝ նախագծային լուծմամբ  
(Գլխամասային հաշվիչ հանգույցի տեղադրում, ԷՊԿ զԿԿ նախատեսում և այլն)

6. Օբյեկտի գազամատակարարման վերականգնման ( կամ գազի ֆիկացման) զճապատկերը



7. Տեխնիկական պայմանները կազմված են «15» 04 2020 թ.

և գործում են մինչև «15» 04 2021 թ.

Երևանի ԳԳՍ Տնօրենի առաջին տեղակալ՝ Ս. ԹԱՐԵԿՈՍՅԱՆ  
գլխավոր ճարտարագետ (Ստորագրություն)

ՇՏՔ պետ՝ Գ.ԱՎԱԳՅԱՆ  
(Ստորագրություն)





**ՆԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ**

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (10) 65 11 90

№ 19 1205  
«23» 04 2020 Վ.Պ.  
Ձեռք \_\_\_\_\_

ք. Երևան, Մարգարյան 22, բն.35


«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊ ընկերության  
տնօրենի /ա  
Ղ. Սահակյանին

**Հարգելի պարոն Սահակյան**

Ի պատասխան Ձեր 08.04.2020թ. դիմումի՝ հայտնում եմ, որ ք. Երևան, Ավան, Ծարավ Աղբյուրի փողոց 61/1 հասցեի տարածքով՝ «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող՝ 0.4-6(10) կՎ և 35-110 կՎ լարման օդային և մալուխային գծեր չեն անցնում:

Էլեկտրամատակարարումը հնարավոր է իրականացնել՝ ՏԵ1638-ի 0.4 կՎ վահանից:

Կադ.՝ Դ.Սահակյան  
010-591265



*(Handwritten signature)*  
**Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 մարտի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Երևան, Ավան Ծարավ Աղբյուրի փողոց 61/6 հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ**

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր տարածամկետ վճարումով 12.03.2020թ. թիվ 560

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 01-002-0214-0242

Մակերեսի չափը (հա)՝ 0.15

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 18032020-01-0248, գաղտնաբառ՝ LNUTBWCVFQIH**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Դիանա Քալանթարյան  
 Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 18032020-01-0248, գաղտնաբառ՝ LNUTBWCYFQIH**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 19 մարտի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ԿԱՆԱԶ ԹԱՂ» ՍՊԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Երևան, Ավան Ծարավ Աղբյուրի փողոց 61/1

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Տարածամկետ վճարմամբ առուվաճառքի պայմանագիր 13/03/2020թ. թիվ 577

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 01-002-0214-0241

Մակերեսի չափը (հա)՝ 0.3505

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 19032020-01-0050, գաղտնաբառ՝ XYUHNIGIMANN4**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝


Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Առկա է 22,74քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արմեն Խալաթյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր



**ՎԿԱՅԱԿԱՆ N 19032020-01-0050, գաղտնաբառ՝ XYUHINGIMANN4**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով







# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 17/48935

« 04 » 06 2020թ.

«ԳԼՈՐԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ Լ. ԶԱՏԻԿՅԱՆԻՆ

Հարգելի Ջատիկյան

Ի պատասխան Ձեր 21.05.2020թ. Երևանի քաղաքապետարան հասցեագրած հ. 20/48935 գրության՝ հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը «Գլորալ պրոեկտ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուր փ. հ. 61/1 և 61/6 հասցեում իրականացվող, բնակելի համալիրի աշխատանքային նախագծի նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկմանն ապահովել է ներկայացուցչի մասնակցությունը և տալիս է նախնական համաձայնություն՝ գործունեության ընթացքում բնապահպանական բոլոր նորմերը պահպանելու պայմանով:

Հարգանքով՝

Աշխատակազմի բնապահպանության  
վարչության պետի տեղակալ,

Գ. Նավասարդյան

Կատ. Գ. Ներսիսյան  
Գ. Ավետիսյան  
Հեռ. 011-514-263